

## Օրենսդրական նախադասության կառուցվածքը

### ABSTRACT

#### THE STRUCTURE OF THE LEGISLATIVE SENTENCE

The present article highlights the main distinguishing features of a legislative text, mainly focusing on specific characteristics of the legislative sentence as the smallest unit of syntax in the legal discourse. The investigation of the legislative sentence underscores the specificity of syntactic structure of the Language for Law.

**Key words.** legal documents, legislative sentence, legal discourse, Language for Law,

### РЕЗЮМЕ

#### СТРУКТУРА ЗАКОНОДАТЕЛЬНОГО ПРЕДЛОЖЕНИЯ

Настоящая статья выявляет основные характеристики законодательного текста, в частности законодательного предложения как наименьшей единицы синтаксиса в юридическом дискурсе. Анализ законодательного предложения подтверждает специфичность синтаксиса юридического языка.

---

\* e-mail: [margaret.apresyan@ysu.am](mailto:margaret.apresyan@ysu.am)



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Received: 29/04/2024

Revised: 07/05/2024

Accepted: 10/05/2024

© The Author(s) 2024

**Ключевые слова.** правовые документы, законодательное предложение, юридический дискурс, юридический язык.

## ԱՄՓՈՓՈՒՄ

Սույն հոդվածը բնութագրում է օրենսդրական տեքստի հիմնական առանձնահատկությունները՝ ուշադրությունը մասնավորապես կենտրոնացնելով օրենսդրական նախադասությանը՝ որպես շարահյուսության նվազագույն միավոր իրավաբանական խոսույթում: Օրենսդրական նախադասության վերլուծությունը հաստատում է իրավունքի լեզվի ուրույն շարահյուսական կառուցվածքը:

**Բանալի բառեր՝** իրավական փաստաթղթեր, օրենսդրական նախադասություն, իրավաբանական խոսույթ, իրավունքի լեզու:

Օրենսդրական տեքստը իրավական նորմեր բովանդակող պաշտոնական փաստաթուղթ է, օժտված է իրավական ուժով և կիրառվում է լիազորված մարմնին համապատասխանող հատուկ արարողակարգով: Օրենսդրական տեքստի ազդեցիկ բնույթն անխուսափելիորեն իր կնիքն է դնում նրա հորինվածքի և լեզվական առանձնահատկությունների վրա:

Նախքան օրենսդրական տեքստի հորինվածքի և լեզվական առանձնահատկությունների նկարագրությունը հարկ է ուշադրություն դարձնել մերձահար մակարդակում առանձնացված «փաստարկում» բաղադրիչի վրա: Օրենսդրական տեքստերի առումով փաստարկումն առաջին հերթին կապված է տրամաբանությանը, որի մասին վկայում են օրենսդրական տեխնիկայի մասնագետների հետազոտությունները, որոնք ավանդաբար առանձնացնում են օրենքի տրամաբանությանը

ներկայացվող պահանջների առանձին խմբում: Ինչպես նշում է Ե. Կրյուկովան, «օրենսդրական փաստաթղթի տեքստը կազմելիս սրամաբանության օրենքներին հետևելը նույնքան կարևոր է, որքան գրական լեզվի կանոններին, քանի որ ամեն մի օրենքի տեքստի հիմքում ընկած են իմաստային կախվածությունները» [Крюкова, 2002:128]: Տրամաբանության տեսանկյունից օրենսդրական տեքստում փաստարկումը նշանակում է հակասությունների բացակայություն, շարադրման հետևողականություն և հատուկ մեթոդներ՝ ընդհանուրից մասնավորը, պարզից բարդը, ընդհանուր կանոնից բացառությունը և հարակից անցումներով: Մյուս կողմից, փաստարկումը կապված է ճարտասանական հայեցակետին, որը ենթադրում է ուշադրության առնել հասցեատիրոջն այն բանի համար, որ հաղորդակցումն արդյունավետ լինի: Տեքստի հեղինակը պետք է ձգտի նրան, որ շարքային քաղաքացին հասկանա նրա դրույթը, ճիշտ հաշվի նստի նրա հետ և հետևի նրան: Դրանից բացի՝ անհրաժեշտ է համանման ազդեցության հասնել իրավաբանի կամ դատավորի (կամ օրենսդրական տեքստի մեկնաբանի) առումով, որոնք պարտավորված են մեկնաբանելու իրավական նորմի էությունը: «Օրինավորությունն այնքան ավելի հիմնավոր կլինի, որքան հասարակության մեջ ավելի լայնորեն արմատավորվի համոզմունքն օրենքի իրավացիության նկատմամբ: Հասկանալի է, որ և՛ օրենսդիրը, և՛ դատավորը փաստարկչի դերով են հանդես գալիս (վերջինս, ակնհայտորեն, ավելի մեծ չափով), որոնք իրավունքի

գործունեության առումով համոզում են այս կամ այն լսարանին ճարտասանության միջոցով» [Баранов, 2002: 123]:

Օրենսդրական տեքստի հորինվածքն ընդհանուր գծերով ենթադրում է երեք մասի առկայություն՝ **մուտք**, **հիմնամաս**, **ելք** կամ **եզրափակիչ մաս**. **մուտքին** են վերաբերում, օրինակ, նախաբանը կամ ներածականը, նպատակադրումը, կարգավորման առարկան, տերմինների որոշարկումը. **հիմնամասում** շարադրվում են հիմնավորապես իրավական նոր նորմեր. **եզրափակիչ մասը** կամ **ելքը** բովանդակում է դրույթներ օրենսդրական տեքստն ուժի մեջ մտնելու, կիրառության ոլորտի, գործողության ժամկետի և այլնի վերաբերյալ:

Իրավունքի լեզվի հետազոտությունների արդյունքների վերլուծությունը թույլ է տալիս մեզ արձանագրել, որ իրավաբանական խոսույթի օրենսդրական տեքստի լեզվական առանձնահատկությունները (անկախ այն բանից՝ անգլալեզու է, հայալեզու թե մեկ այլ լեզվով) հանգում են հետևյալներին. ա) շարադրանքի անդիմություն, բ) ասույթի անհասցեականություն, կոչականի բացակայություն, գ) շարադրանքի չեզոքություն՝ դրսևորված գեղարվեստական խոսքի և արտահայտչական բառապաշարի տարրերի բացակայությամբ, դ) արտահայտության հստակության և միանշանակության ձգտում, հոմանշության և համանունության նվազեցման ձգտում է) տերմինավորման բարձր աստիճան, զ) շարադրանքի կաղապարայնության բարձր աստիճան՝ արտահայտված կայուն բառակապակցությունների՝ բառերի

արարողակարգային կապակցելիության հետ ունեցած գործածությամբ, է) հնաբանությունների գործածության հայտնի բաժնեմաս, ը) բայի սահմանական ձևերի գերակշիռ գործածություն, թ) ներկա ժամանակի գերակշիռ գործածություն:

Օրենսդրական տեքստի վերոնշյալ առանձնահատկությունները տարաբնույթ են և բազմամակարդակ. նրանց առկայությունը թույլ է տալիս եզրակացնել, որ օրենսդրական տեքստն իր ուրույն տեղն է գրավում իրավագիտական խոսույթում:

Ինչ վերաբերվում է օրենսդրական նախադասության կառուցվածքին, մանրամասնորեն նկարագրել է քրիտանացի իրավագետ Ջորջ Բուդը «On legislative expression, or the language of the written Law» [George Coode 1848] գրքում: Նա նախադասության կազմում առանձնացնում է չորս գլխավոր բաղադրիչ.

1. **Ենթակա** (legal subject) – որոշակի իրավունքներ ձեռք բերած և որոշակի պարտականություններ ստանձնած դեմք:

2. **Գործողություն** (legal action) – իր իսկ իրավունքների և պարտականությունների նկարագրություն:

3. **Հանգամանքներ**, որոնք մասնավորում և սահմանափակում են օրենքի առանձին դրույթի կիրառության ոլորտը (case):

4. **Պայմաններ**, որոնց կատարման ընթացքում իրավունքներն ու պարտականություններն օրինական ուժի մեջ են մտնում (conditions) [Coode 1848, 6]:

Կամայական օրենսդրական նախադասության պարտադիր բաղադրիչներ են ենթական և գործողությունը: Հնարավոր են դրանց հետևյալ համակցումները.

1. Մեկ ենթակա և մեկ գործողություն.

*The Secretary of State may by order make provision for the dissolution of the*

*Authority.* (London Olympic Games and Paralympic Games Act 2006)

2. Մեկ ենթակա և բազմակի գործողություն.

*The Assembly must —*

*(a) develop policies for the promotion and encouragement of safe, integrated, sustainable, efficient and economic transport facilities and services to, from and within Wales, and*

*(b) carry out its functions so as to implement those policies.*

*(Transport (Wales) Act 2006)*

3. Բազմակի ենթակա և մեկ գործողություն.

*The Lord Chancellor and the Law Commission may agree for the purposes of this section a statement (a "protocol") about the Law Commission's work.*

*(Law Commission Act 2009)*

4. Բազմակի ենթակա և բազմակի գործողություն.

*The Comptroller and Auditor General must—*

*a. examine, certify and report on each statement of accounts received under sub-paragraph (3), and*

*b. send a copy of each report and certified statement to the Secretary of State. (Child Maintenance and Other Payments Act 2008)*

Սակայն միայն տվյալ երկու բաղադրիչից բաղկացած նախադասությունների քանակը կամայական կանոնագրքում խիստ սակավ է, քանի որ օրենքը շատ հազվադեպ է համընդհանուր բնույթ կրում: Դեպքերի ճնշող մեծամասնությամբ օրենքը կիրառվում է սուկ որոշակի իրադրության մեջ կամ որոշակի պայմաններ կատարելու ընթացքում (կամ երկուսի՝ միասնաբար), որ անխուսափելիորեն առաջ է բերում նախադասության մեջ «հանգամանքի» կամ «պայմանի» (կամ երկուսի՝ միասնաբար) բաղադրիչի ներառում:

*Where the convicting court deals with an offender's case under subparagraph (9) or (11), it must send to the Crown Court such particulars of the case as may be desirable. (Criminal Justice and Immigration Act 2008)*

*If the affairs of a body corporate are managed by its members, subsection (1) applies in relation to the acts and defaults of a member in connection with his functions of management as if he were a director of the body. (Digital Switchover (Disclosure of Information) Act 2007)*

*Where a magistrates' court has power to make a youth default order, it may, if it thinks it expedient to do so, postpone the making of the order until such time and on such conditions (if any) as it thinks just. (Criminal Justice and Immigration Act 2008)*

Ըստ Ջ. Քուդի կարծիքի՝ կանոնագրքի տեքստում հեշտությամբ որոշելու համար «հանգամանքի» բաղադրիչը հարկ է ուշադրություն

դարձնել այդ կարգի տեքստն սկզբնավորող համապատասխան բառերին, որոնք են՝ *where, when* կամ *in case*, մինչդեռ «պայմանը» ավելի տրամաբանական է, որ ատահայտված լինի ստորադասական եղանակի միջոցով, այսինքն՝ ստորադաս նախադասություններով՝ *if* շաղկապով [Coode 1848, 24, 30]:

Վերոնշյալ բաղադրիչները նախադասության մեջ պետք է բաշխված լինեն հետևյալ շարադասությամբ՝ հանգամանք, պայման, ենթակա, գործողություն: Ջ. Քուլը բաղադրիչների հենց այդ տրամաբանական հաջորդականությունը հիմնավորում է նրանով, որ հանգամանքները թույլ են տալիս օրենքն ընթերցողին անմիջապես որոշել՝ վերաբերո՞ւմ է արդյոք իր գործը օրենքի հատկապես այդ հոդվածի դրույթներին, կամ արժե՞ օրենքի ընթերցումը շարունակել՝ գտնելու դրույթները, որոնք հնարավոր լինի կիրառել իր գործի նկատմամբ: Գտնելով հարկավոր դրույթը՝ ընթերցողը հետո իմանում է, որ անհրաժեշտ է դրա ուժի մեջ մտնելը, իսկ դա գրանցված է պայմանների մեջ: Վերջապես, ցույց է տրված՝ հատկապես ով է իրավասու իրականացնելու ինչ-ինչ գործողություններ, կամ ով է հատկապես պատասխանատվություն կրում թույլ տված արարքների համար [Coode 1848, 34-36]:

Բաղադրիչների այդպիսի տրամաբանական հաջորդականությունն արդիական էր XIX դարում, երբ օրենքներ կազմելիս դեռևս չկար բավարար հստակություն և անհրաժեշտ միօրինակություն: XX դարում «Հանուն պարզ անգլերենի» շարժման ծագման հետ իրադրությունն սկսեց փոխվել: Փաստարկներ ի հայտ եկան առ այն,



որ նախադասությունն առավել հասկանալի է դառնում, եթե նրա շարահյուսական կառուցվածքը համապատասխանում է հետևյալ կադապարին՝ SVO (Subject + Verb + Object, այսինքն՝ ենթակա + բայ-ստորոգյալ + խնդիր): Ինչ վերաբերում է XXI դարի օրենքներին, ապա մեր գնումները թույլ են տալիս արձանագրել հետևյալը:

Առաջին՝ եթե նախադասությունն ընդգրկում է այնպիսի երեք անդամ, ինչպիսիք են պարագան, ենթական և բայ-ստորոգյալը, ապա այն սկսվում է, ինչպես և երաշխավորել է Ջ. Քուդը, հատկապես հանգամանքով (պարագայով), օրինակ՝

*Where the education or training specified is training provided in accordance with a contract of apprenticeship otherwise than by a course, the attendance notice must specify prescribed details of the contract of apprenticeship. (Education and Skills Act 2008)*

Մյուս կողմից, «this section applies» պարագայական ստորադասը դրված է գլխավոր նախադասությունից հետո.

*(a) information about an individual has been provided for verification purposes to the Secretary of State or to a designated documents authority; and*

*(b) it appears to the Secretary of State that the information was inaccurate or incomplete in one or more particulars. (Identity Cards Act 2006)*

Երկրորդ՝ եթե նախադասությունն ընդգրկում է այնպիսի երեք բաղադրիչ, ինչպիսիք են պայմանը, ենթական և գործողությունը, ապա *ի՞*ով ստորադասը, որպես կանոն, դրվում է գլխավոր նախադասությունից հետո, հատկապես եթե այդպիսի պայմաններ մի քանիսն են:

*(a) A person commits an offence if he fails to provide information in accordance with a requirement of OFCOM under section 32. (Wireless Telegraphy Act 2006)*

*The Council may refuse to investigate a complaint, or part of a complaint, if— (a) the complaint or part appears to the Council to be frivolous or vexatious;*

*(b) the complaint or part falls within a class of matter which, a regulatory body is under a duty (whether imposed by or under an enactment or otherwise) to investigate;*

*(c) the complaint or part is being dealt with, or the Council is satisfied that it would be better dealt with, under an ombudsman scheme or any other redress scheme or in legal proceedings... (Consumers, Estate Agents and Redress Act 2007)*

Վերոնշյալ չորս բաղադրիչներին՝ ենթակա, գործողություն, հանգամանք, պայման, Վ. Բհատիան ավելացնում է սահմանափակումը (qualification), որի գլխավոր գործառույթը հիմնական դրույթների պարզաբանումն է, օրենքին զգալի պարզություն և հստակություն հաղորդելը [Bhatia 1994, 150]:

Բհատիան առանձնացնում է սահմանափակումների երեք տիպ՝ կախված նրանց իրավական գործառույթից.

1. **Նախապատրաստական** (preparatory) սահմանափակումը մասնավորում է իրավական նորմի կիրառման դեպքերը: Այս տիպին են վերագրվում (Ջ. Քուդի տերմինաբանությամբ) «հանգամանքն» ու «պայմանը», չկանխատեսված հանգամանքների, գործողության կատարման միջոցների, բացառությունների նկարագրությունը:

2. **Գործառնական** (operational) սահմանափակումը մանրամասնում է օրենքի կիրառման դրույթները: Այս տիպին են վերագրվում օրենքի նպատակի շարադրանքը, ժամանակավոր հարաբերությունների բնութագիրը:

3. **Վերաբերական** (referential) սահմանափակումը որոշում է կանոնագրքի միջտեքստային դրույթան բնույթը: Այս տիպին են վերագրվում պաշտոնյայի լիազորության սահմանների նկարագրությունը, դրույթի կիրառման ոլորտի նկարագրությունը, հեղինակավոր աղբյուրի նկարագրությունը, տերմինների սահմանումը [Bhatia 1994, 150]:

Հարկ է նշել, որ պարտադիր չէ, որ մեկ նախադասությունը բովանդակի սահմանափակման բոլոր երեք տիպերը. դրանց համակցումները կարող են տարբեր լինել: Բացի այդ՝ օրենսդրական նախադասության կառուցվածքում կարելի է առանձնացնել բուն սահմանափակում (proviso), այսինքն՝ հոդվածի մի մասը, որ սկսվում է provided բառով: Այդպիսի սահմանափակումը սովորաբար ներառված է լինում օրենքի հոդվածի կամ կետի վերջում և գործածվում է այն դրույթի գործողության ոլորտը նեղացնելու նպատակով, որին պատկանում է այդ սահմանափակումը:

*An order made in the name of the partnership continues to have effect despite a change of partners **provided** that at least one of the persons who was a partner before the change remains a partner after it.* (Serious Crime Act 2007)

*A bank liquidator may be removed by resolution of a meeting of creditors held pursuant to section 195 of the Insolvency Act 1986 (as applied by section 103 above) **provided that the following conditions are met** (Banking Act 2009)*

Այս բնույթի սահմանափակումներով նախադասությունները վերագրելի չեն բրիտանական կանոնագրքերում համեմատաբար տարածված կարգերին: Մեր հետազոտությունը ցունց է տալիս, որ դրանք հանդիպում են օրենքների 12 %-ում, ընդ որում դրանց թիվը յուրաքանչյուր կանոնագրքում բավականաչափ փոքր է (1-ից 5):

Մի շարք դեպքերում օրենսդրական նախադասության կառուցվածքը կարող է ունենալ «շերտաբրդուճ կառուցվածքի» ձև (sandwich clauses), այսինքն՝ երբ սկզբի նախադասության (որպես կանոն՝ ստորադաս) և վերջի նախադասության (գլխավոր) արանքում թվարկվում են պայմաններ, հանգամանքներ ևն, ընդ որում գլխավոր և ստորադաս նախադասությունները լիակազմ են և ունեն ընդհանուր ենթակա, օրինակ՝

*Where the court is satisfied—*

*(a) that a person who has given a notice of claim has a legitimate reason for possessing part of the relevant property, and*

*(b) that, although the part is not a separable part within the meaning given by sub-paragraph (6), it can be separated from the remainder of the relevant property,*

*the court may order the return of that part to that person.* (Police and Justice Act 2006) HJH:

*If a person to whom a notice has been given under subsection (5) above delivers the notice and (if he is the holder of a licence) his licence in accordance with subsection (5A) above, and the following requirements are met, that is—*

*(a) the person to whom the notice is delivered' is satisfied, on accessing information held on his driving record, that he would not be liable to be disqualified under section 35 of this Act if he were convicted of the offence, and*

*(b) if he is the holder of a licence, it is delivered to be retained and dealt with in accordance with this Part of this Act, the person to whom the notice is delivered must give him a fixed penalty notice in respect of the offence to which the notice under subsection (5) above relates. (Road Safety Act 2006)*

Ինչպես նշում է Խորհրդարանի իրավաբանական բաժինը, նման կառուցվածքը դժվարընկալ է դարձնում միտքը: Այս առիթով տվյալ բաժինն առաջարկում է վերակառուցել նախադասությունը՝ ըստ էության փոխատեղելով ստորադաս և գլխավոր նախադասությունները.

[cairr]. URL:<http://www.cabinetoffice.gov.Uk/media/190016/clarity%20paper%20with%20hyperlinks.pdf>,

էնթադրենք՝

*The court may order the return of part of the relevant property to a person where the court is satisfied—*

*(a) that the person who has given a notice of claim has a legitimate reason for possessing the part of the relevant property, and*

*(b) that, although the part is not a separable part within the meaning given by sub-paragraph (6), it can be separated from the remainder of the relevant property.*

Նյութի վերլուծությունը ցույց է տալիս, որ «շերտաբրդուճ» տիպի կառուցվածքները, ըստ էության, խիստ հազվադեպ են գործածվում (կանոնագրքերի ընդամենը 8 %-ում, ընդ որում՝ նրանցից յուրաքանչյուրում այդ կարգի միայն մեկ կառուցվածք), որն իրավունք է տալիս խոսելու նախադասության կառուցման միտումի մասին՝ համապատասխան Խորհրդարանի իրավաբանական բաժնին առընթեր Օրենսդրական տեխնիկայի հարցերի գծով խմբի երաշխավորումների. նպատակը հասնելն է օրենսդրի մտքի պարզությանը:

#### **ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

1. Баранов В. М. (2002) Риторика и право / В. М. Баранов, А. С. Александров, Н. Д. Голев // Юрлингвистика-3: Проблемы юрлингвистической экспертизы: межвуз. сб. науч. трудов / (под ред. Н. Д. Голева).- Барнаул: Изд-во Алт. ун-та,- с. 113-124
2. Власенко Н. А. (1997) Язык права: монография / Н. А. Власенко.- Иркутск: Восточно-сибирское книж. изд-во, Норма-плюс - 176 с.
3. Крюкова Е.А. (2003): Язык и стиль законодательных актов, с. 139
4. Губаева Т. В. (2007) Язык и право. Искусство владения словом в профессиональной юридической деятельности / Т. В. Губаева , -М.: Норма, -160 с.
5. Муцинина М.М. О правовой лингвистике в Германии// в: Юрис- лингвистика, V. Юридические аспекты языка и лингвистические аспек- ты права, Барнаул 2005, с. 18-30.

6. Пиголкин А.С. Законодательство о языках Российской Федерации: опыт, проблема развития.//: Языковая ситуация в Российской Федерации, Москва 1992, с. 22-23.
7. Савицкий В. М. Язык права : дискурсивный аспект. Монография / В. М. Савицкий, Е. Г. Вышкин. Самара : Сам. гос. арх.-строит. ун-т, 2006. - 152 с.
8. Шепелев А. Н. Язык права как самостоятельный функциональный стиль : дис. . канд. юрид. наук / А. Н. Шепелев. — Тамбов, 2002. — 217 с.
9. Bhatia V. K., Simplification is Easification: the Case of Legal text. // Applied Linguistics. 1983. vol. 4. -1, p.42-54
10. George Coode.(1848), On legislative expression, or, The language of the written law, John Gibbons (2004), Language and the Law, Cambridge University Press 49p.
11. Tiersma P. M., Legal Language, 1999.